**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ԳՀԱՊՁԲ-20-2/7-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 25 .03.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Մ.Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 31.01.2020թ. կնքված №ԳՀԱՊՁԲ-20-2/7-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի №1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի №1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 6 763 050 (վեց միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ պատրաստության գլխավոր վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք.Երևան, Օրբելի 33Ա, բն.15 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ԱրմՍվիսԲանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900011022453 7 | Հ/Հ 2500010332900100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 08209436 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ | Տնօրեն |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-2/7-1 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չ/հ | Գնման առարկան | Չ/մ | Քանակը | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/ | Ապրանքների մատակարարումը 2020թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ |
| 1 | Եռակցման էլեկտրական սարքեր (Էլ. եռակցման սարք) | հատ | 40 | 57 000 | 2 280 000 | 40 |
| 2 | Ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ (Կտրող սարք (Բալգարկա)) | հատ | 65 | 44 280 | 2 878 200 | 65 |
| 3 | Ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ էլեկտրական շաղափ (դռել) | հատ | 65 | 24 690 | 1 604 850 | 65 |

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-2/7-1 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/Հ | Գնման ենթական ապրանքների անվանումը | CPV կոդ | Վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին՝ ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ. | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | Եռակցման էլեկտրական սարքեր (Էլ. եռակցման սարք) | 42661400/507 | 2 280 000 | 2 280 000 | 2 280 000 | 2 280 000 | 2 280 000 | 2 280 000 | 2 280 000 | 2 280 000 | 2 280 000 |
| 2 | Ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ (Կտրող սարք (Բալգարկա)) | 42651200/509 | 2 878 200 | 2 878 200 | 2 878 200 | 2 878 200 | 2 878 200 | 2 878 200 | 2 878 200 | 2 878 200 | 2 878 200 |
| 3 | Ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ էլեկտրական շաղափ (դռել) | 42651200/510 | 1 604 850 | 1 604 850 | 1 604 850 | 1 604 850 | 1 604 850 | 1 604 850 | 1 604 850 | 1 604 850 | 1 604 850 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

Ն. ՅՈՒԶՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ տնօրեն

ԽԱՉԱՏՐՅԱՆ